

**Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության դիրեկտիվ
պլանավորումը 1946-1953 թ.թ.**

Կոլյիկյան Արամայիս

***Հանգուցային բառեր.** ԽՍՀՄ Պետպլան, ԽՍՀՄ նախարարների
խորհուրդ, կոլեկտիվ տնտեսություն, բնակլիմայական պայմաններ, ցան-
քաշրջանառություն, բարեփոխումներ, ագրարային ճգնաժամ*

Նախաբան

Քննարկվող ժամանակահատվածում Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսությունը, իր առանձնահատկություններով հանդերձ, կրել է Խորհրդային Միության գյուղատնտեսության փոփոխությունների բնորոշ հիմնական օրինաչափությունները: Այդ փոփոխությունների հենքը դեռևս կոլեկտիվացման շրջանից պետության կողմից իրականացվող ագրարային քաղաքականությունն էր: Նպատակ ունենալով խոշոր գյուղատնտեսական արտադրության ստեղծումը՝ այդ քաղաքականության մեջ առանձնահատուկ կարևորվում էր կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների կազմակերպչատնտեսական ամրապնդումը և առավելագույնս վերահսկողությունը գյուղատնտեսության վարման համակարգի վրա:

Հիմնական շեշտը դնելով տնտեսության էքստենսիվ զարգացման վրա՝ կենտրոնացված ձևով պլանավորվում էին յուրաքանչյուր գյուղատնտեսական ձեռնարկության ցանքատարածությունները, մշակվող կուլտուրաները, դրանց բերքատվությունը, անասնազխաքանակը, մթերատվությունը և այլն: Այսպիսի պայմաններում անտեսվում էին մեր հանրապետության գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները՝ կոնկրետ բնակլիմայական պայմանները, սակավահողությունը, աշխատանքի արտադրողականության և աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացման ու տնտեսապես հիմնավորված բաշխման սկզբունքները:

Եթե այս ամենին հավելենք իշխանությունների պատժիչ-վարչարարական միջոցառումներն ու կամայական ցուցումները, ապա պարզ կդառնա, թե որքան լրջորեն էր վտանգված գյուղատնտեսության զարգացումը:

Հետազոտության նպատակն է ԽՄԿԿ ագրարային քաղաքականու-

թյան համատեքստում բացահայտել գյուղատնտեսության դիրեկտիվ պլանավորման ուղղվածությունը և քննարկել վերջինիս բացասական հիմունքները:

Այս հիմնահարցի ուսումնասիրությունն իր մեջ ընդգրկում է գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ու վարչարարության խստացման, մեր հանրապետության բնակլիմայական առանձնահատկությունների անտեսման, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցածր ցուցանիշների և համանման այլ խնդիրների պարզաբանումն ու այդ ուղղությամբ իրականացված միջոցառումների լուսաբանումը:

Քննարկվել են նաև անընդհատ խորացող ագրարային ճգնաժամի պատճառներն ու այն կանխելու իշխանությունների ձեռնարկած միջոցառումների ձախողման օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները:

Հետազոտության մեջ գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային նյութեր ու փաստաթղթեր, որոնք հնարավորություն են ընձեռում նոր հարցադրումներով ու եզրահանգումներով լուսաբանել Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի փոփոխությունները: Այն կարող է օգտակար լինել ՀԽՍՀ գյուղի սոցիալ-տնտեսական փոփոխություններն ուսումնասիրողների համար:

Հայկական ԽՍՀ գյուղատնտեսության պլանավորումը

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ՀԽՍՀ ցանքատարածությունները 27 հազ. հա ընդարձակվեցին, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 6 % աճեց [23, 65: 27, 15] (ԽՍՀՄ-ում այն նվազել էր 40 %-ով, այդ թվում՝ Բելոռուսիայում 49,4, Ուկրաինայում 48,4 %-ով) [25, 115]: Դա ձեռք բերվեց բացառապես գյուղական բնակչության գերծանրաբեռնվածության, անասելի զրկանքների ու դժվարությունների գնով: Բավական է նշել, որ եթե 1940 թ. նրանք վաստակել էին 55 մլն, ապա 1945 թ. 106 մլն աշխօր [3]:

1945 թ. օգոստոսին ԽՍՀՄ Պետպլանը ԽՍՀՄ ժողովրդի և միութենական հանրապետությունների կառավարությունների հետ համատեղ սկսեց չորրորդ 5-ամյա պլանի նախապատրաստումը: Դրա քննարկման ժամանակ առաջարկվեց գյուղատնտեսության բնագավառում մեղմել վարչարարությունը և վերակառուցել կոլեկտիվ տնտեսությունները: Սակայն, ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման հնգամյա (1946-1950 թ.թ.) պլանի իրականացման նախապայման դիտվեց բոլոր տեսակի հանրային տնտեսությունների կազմակերպչատնտեսական ամրապնդումը:

Մեր հանրապետությունում նախատեսվեց ցանքատարածություններն ընդարձակել 51.3 հազ. հեկտարով՝ 1950 թ. հասցնելով 512 հազ. հեկտարի: Այդ տարածությունները հիմնականում հատկացվելու էին հացահատիկի, բանջարաբուծական և տեխնիկական մշակաբույսերին: Անասնապահության բնագավառում անասնազվաքանակի ավելացման և խնամքի բարելավումից բացի ուշադրություն էր դարձվելու ցեղայնության բարձրացմամբ բարձրորակ անասունների բուծմանը: Այդ ամենի շնորհիվ ՀԽՍՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելանալու էր 75 %-ով [18] (ԽՍՀՄ-ում՝ 27, իսկ պատերազմից ավերված շրջաններում՝ 15%-ով): Աշխատանքի արտադրողականությանը բարձրանալու էր 36, իսկ ազգային եկամուտը՝ 38 %-ով [24, 262]:

1946 թ. անբարենպաստ բնակլիմայական պայմանները խոչընդոտեցին գյուղատնտեսության վերականգնման ընթացքը: Հանրապետության ցանքատարածությունները 1945 թ. համեմատությամբ 1946 թ. կրճատվեցին 2,4 %-ով [2], խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 0,6, մանր եղջերավոր անասուններինը՝ 8,5, խոզերինը՝ 5,3 %-ով [6]:

Բնական անբարենպաստ պայմաններից բացի կային նաև գյուղատնտեսության վերականգնումն արգելակող սուբյեկտիվ պատճառներ. ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ պատերազմից հետո մեծ չափերի էին հասել ներկուտնտեսային դեմոկրատիայի խախտումները, ավելացել էին հանրային ունեցվածքի հափշտակումները, աշխօրերի շոայյումը, ընդլայնվել էր տնտեսությունների ղեկավարման վարչարարությունը: Դրանք հասել էին այն աստիճանի, որ Ստեփանավանի, Արտաշատի, Մարտունու, Աշտարակի շրջանների կուլտնտեսությունների միջոցներից հատուկ «ֆոնդեր» էին ստեղծվում, որոնցից, ըստ հայեցողության, շրջանային ղեկավարներն անվճար մթերքներ էին ստանում կամ բաշխում իրենց բարեկամներին [1, 22]: Տեղական չինովնիկների այս գործելաոճը վերածվել էր սեփական կարիքները հոգալու յուրահատուկ, կայացած «համակարգի»:

Ուռճացել էր նաև վարչասպասարկող համակարգը: Այսպես. էթե 1940 թ. հանրապետության կուլտնտեսություններում վերջիններիս պահպանման ծախսերը կազմում էին կուլտնտեսականների վաստակած աշխօրերի 8, ապա 1946 թ.՝ 11,2 %-ը [4]:

Ստեղծված իրավիճակում ԽՍՀՄ նախարարների խորհրդը և ՀամԿ(բ)Կ ԿԿ 1946 թ. սեպտեմբերի 19-ին «Կուլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջոցառումների մասին» որոշում ընդունեց: Խնդիր դրվեց ուժեղացնել

պայքարը կոլտնտեսային սեփականության զանգվածային հափշտակությունների դեմ, և նախանշվեցին կոլտնտեսությունների կազմակերպչատնտեսական միջոցառումներ:

Ինչ խոսք, վարչարարության խստացմամբ կոլտնտեսային օրինակելի կանոնադրության խախտումներն ու աշխօրերի շռայլման փաստերը պակասեցին, բայց ամբողջովին չվերացան: Թեև ՀԽՍՀ կոլտնտեսություններում վարչասպասարկող անձնակազմի ծախսերը կրճատվել էին՝ 1948 թ. կազմելով կոլտնտեսականների վաստակած աշխօրերի 5,5, իսկ 1949 թ.՝ 4,6 %-ը, բայց իրականում շատ կոլտնտեսությունների հաշվետվություններում դրանք միտումնավոր նվազեցված էին: Օրինակ՝ Էջմիածնի, Բերիայի, Հոկտեմբերյանի և Կալինինոյի շրջանների 36 կոլտնտեսություններում անցկացված ստուգումները բացահայտեցին, որ վարչասպասարկող անձնակազմի 341 աշխատողի փոխարեն հաշվետվություններում ներկայացվել էր 261-ը, իսկ նրանց վրա ծախսված 89504 աշխօրի դիմաց՝ 72052-ը [11]: Ահա թե ինչու 1949 թ. հանրապետության կոլտնտեսությունների 20 %-ում (237 կոլտնտեսություն) այդ նպատակով կատարվեց աշխօրերի գերածախս [7]:

Քիչ չէին նաև հանրային ունեցվածքի հափշտակության ու չարաշահման փաստերը: Միայն 1947 թ. Արտաշատի, Մարտունու, Սևանի, Շամշադինի, Բասարգեչարի, Էջմիածնի, Կրասնոսելսկի շրջանների կոլտնտեսություններում հայտնաբերվեց այդպիսի 313, իսկ 1948 թ.՝ 2660 դեպք [1, 23]:

Գյուղատնտեսության վերականգնմանը նախևառաջ խոչընդոտում էր կենտրոնացված դիրեկտիվ պլանավորումը: Պլանավորման բարդ համակարգի առանձնահատկությունն այն էր, որ վերադաս մարմինների ցուցումով ՀԽՍՀ Պետպլանը և Գյուղատնտեսության նախարարությունը, առանց հաշվի առնելու առանձին տնտեսությունների բնակլիմայական պայմանների յուրահատկություններն ու տնտեսական նպատակահարմարությունը, ցուցաբերում էին նույնանման կադապարված մոտեցումներ: Կենտրոնացված ձևով պլանավորվում էին յուրաքանչյուր կոլտնտեսության ցանքատարածությունները, մշակաբույսերը, նրանց բերքատվությունը, անասունների գլխաքանակը, մթերատվությունը և այլն: Արդյունքում գյուղատնտեսական ձեռնարկությունների գերակշիռ մասում տեղաբաշխված էին բոլոր հնարավոր գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, անասնապահական ու թռչնաբուծական ֆերմաները: Այդ ամենը խոչընդոտում էր հողի և տեխնիկայի արդյունավետ օգտագործումը: Ավելին, հանգեցնում էր արտադրանքի բարձր ինքնար-

ժեքի, հետևաբար՝ նաև արտադրության ցածր շահութաբերության: Օրինակ, բամբակի ցանքատարածությունները ավելացվում էին ի հաշիվ Արարատյան հարթավայրի նոր յուրացվող հողերի, որտեղ զարգացման առավել մեծ հեռանկար ունեին բանջարաբուծությունը, կաթնային ինտենսիվ անասնապահությունը [16, 76]:

Օխախտագործությունն ընդգրկում էր հանրապետության լեռնային շրջանները՝ Ապարան ու Սևան, և բարձրադիր գոտիների առանձին կոլտնտեսություններ: Գորիսի, Ղափանի, Թալինի և այլ շրջանների որոշ կոլտնտեսություններում ծխախոտի ցանքերի պլանները գերազանցում էին այն հողատարածությունները, որոնք ապահովված էին ամառային սեզոնի ոռոգվող ջրով: Չնայած հայտնի էր, որ Արթիկի, Կիրովականի և Ստեփանավանի շրջաններում շաքարի ճակնդեղի աննշան բերք է ստացվում, սակայն դա չէր խանգարում, որպեսզի անընդհատ ավելացնեին դրանց ցանքատարածությունները [14, 179]:

Վերադաս պլանային մարմիններն անհրաժեշտ էին համարում կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությունը հասցնել այնպիսի չափերի, որը լիովին կբավարարեր քաղաքային բնակչության, վերամշակող արդյունաբերության և անասնապահության կարիքները: Ուստի՝ գրեթե բոլոր գյուղատնտեսական ձեռնարկությունները, անկախ բնակլիմայական պայմաններից, նույնիսկ փոքր հողատարածքների վրա ստիպված էին զբաղվել կարտոֆիլի և բանջարեղենի մշակմամբ [15, 50-52]: Արդյունքում՝ 1953 թ. կարտոֆիլի մշակմամբ զբաղվող 381 կոլտնտեսությունից 209-ը (55 %), նախատեսված 105 ց փոխարեն հեկտարից ստացավ 50 ց բերք, իսկ բանջարաբուծությամբ զբաղվող 508 կոլտնտեսություններից 281-ը (55,3 %)՝ նախատեսված 107 ց փոխարեն 45 ց բերք [26, 105]:

Այգեգործությունը հանդիսանում էր ՀԽՍՀ գյուղատնտեսության առավել արժեքավոր և եկամտաբեր բնագավառներից մեկը: Այն պատկանում էր գյուղատնտեսական այն ճյուղերի թվին, որոնք աչքի էին ընկնում փոքր հողատարածությունների վրա տնտեսական անհամեմատ ավելի մեծ արդյունավետությամբ, արտադրության մեծ ծավալներ զարգացնելու հատկությամբ: Ցավոք, այդ բնագավառն անուշադրության էր մատնված:

Հետպատերազմյան տարիներին քայլեր ձեռնարկվեցին մերձարևադարձային կուլտուրաների մշակումը ընդարձակելու ուղղությամբ: ՀԿ(բ)Կ ԿԿ 1949 թ. հունվարի 18-ի որոշմամբ նախատեսվեց 1950-1955 թ.թ. այդ կուլտուրաների տարածությունը հասցնել 10 հազ. հեկտարի [1, 68]: Սակայն, այդ որոշման իրականացումը ձգձգվեց հանրապետությանը սեփական հացով ապահովելու համար պարտադրված որոշման կապակ-

ցությամբ: 1950-1953 թ.թ. նախատեսված նոր այգիների տնկարկները դրվեցին հացահատիկի մշակության տակ: Նույն որոշման իրականացման հետևանքով ամբողջովին և մասնակի շարքից դուրս եկան նաև արդեն պտղաբերության շրջանում գտնվող խաղողի և պտղատու այգիների զգալի տարածություններ (կոլտնտեսությունների հաշվետվությունների համաձայն՝ 1953 թ. մոտ 5 հազ. հա այգիների տարածությունը դրվել էր հացահատիկի ցանքատարածությունների տակ) [1, 67]:

ՀԽՍՀ գյուղատնտեսության պլանավորման ու տեղաբաշխման գործում թույլ տրված սխալներից էր մեր հանրապետությանը սեփական հացով ապահովելու վերաբերյալ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1950 թ. մայիսի 30-ի որոշման կիրառումը, ըստ որի՝ նախատեսվեց տարեկան մոտ 30 հազ. հեկտարով ավելացնել հացահատիկի ցանքատարածությունները: Հայաստանում, ազատ ցանքատարածությունների բացակայության հետևանքով, նույն թվականի հունիսին ՀԿ(Բ)Կ ԿԿ պլենումը որոշեց մինչև 1956 թ. վարել 52 հազ. հա արոտավայրեր և 42 հազ. հա խոտհարքեր:

Զավեշտական է, բայց երբ արոտավայրերը և խոտհարքերը ուսումնասիրելու նպատակով ստեղծված կառավարական հանձնաժողովը ներկայացրեց ցանքսի ենթակա 76 հազ. հա տարածություն, կառավարությունը, անտեսելով հանձնաժողովի առարկություններն ու պատճառաբանությունները, պահանջեց ավելացնել ևս 21 հազ. հա տարածություն: Միաժամանակ, 1951 թ. բարձրացվեցին հացահատիկի պարտադիր մթերումների ծավալները, իսկ միջին բերքատվությունը նախանշվեց հեկտարից 22 ց [1, 67]:

Այդ որոշման կատարման արդյունքում 1950 թ. համեմատությամբ 1953 թ. հացատահատիկի ցանքատարածություններն ավելացան 63,6 հազ. հեկտարով: Սակայն վեգետացիայի շրջանի անբավարարության հետևանքով միայն 1953 թ. միջին բերքատվությունը կազմեց 6,8 ց, իսկ 93 կոլտնտեսություններում կամ ՀԽՍՀ բոլոր կոլտնտեսությունների 15 %-ում՝ 4 ց (Ազիզբեկովի և Մեղրու շրջանների առանձին կոլտնտեսություններում՝ դրանից էլ պակաս): Համախառն բերքը, միջին բերքատվության նվազման հետևանքով, կազմեց 2638 հազ. ց կամ 1950 թ. համեմատությամբ կրճատվեց 174 հազ. ցենտներով [12]:

Ստացված ցածր բերքի հետևանքով 1953 թ. կոլտնտեսություններում յուրաքանչյուր աշխօրի դիմաց բաշխվեց ընդամենը 1,7, իսկ 30 կոլտնտեսությունում՝ 1 կգ հացահատիկ: Դա իր հերթին հանգեցրեց գյուղում հացի վաճառքի ավելացմանը. եթե 1952 թ. այն կազմում էր 48,8 հազ. ռուբլի,

ապա 1953 թ. աճեց մինչև 53,9 հազ. ռուբլի, իսկ այլուրի վաճառքը՝ համապատասխանաբար 51,4 և 56,2 հազ. ռուբլի: Բացի այդ, կոլտնտեսականները ստիպված էին ամեն տարի Ստավրոպոլի, Ալթայի, Կուրսկի, Վորոնեժի և Ռուսաստանի այլ մարզերից տասնյակ հազարավոր տոննաներ ցորեն ներկրել [13]:

Համախառն արտադրանքի ցածր ցուցանիշը հետևանք էր նրան, որ վերը նշված որոշումն ընդունելիս ամբողջովին անտեսվել էին Հայաստանի բնակլիմայական պայմանների առանձնահատկությունները: Համատարած չէր կիրառվում ճիշտ ցանքաշրջանառություն: Հայտնի իրողություն է, որ աշնանացան հացահատիկը երկու անգամ բարձր բերք էր ապահովում, քան գարնանացանը: Բայց, հատկապես Հայաստանում, անհիմն կերպով կրճատվում էին աշնանացան հացահատիկի ցանքատարածությունները: Այսպես, եթե 1940 թ. կատարվել էր 137 հազ. հա աշնանացան, ապա 1953 թ.՝ 65782 հա [20, 78]:

Միաժամանակ հերկվեցին հիմնականում լեռնային մեծ թեքություն ունեցող լեռնալանջերը, որոնց ճնշող մասը, մի քանի տարի անց հողատարման ենթարկվելով, ամբողջովին դուրս մղվեց գյուղատնտեսությունից:

Հողերի յուրացումը հսկայական միջոցառումներ պահանջող բավական աշխատատար գործ էր: Միայն այդ տարածքները քարերից ու թփերից մաքրելու և մեքենահարմար դարձնելու համար պահանջվեց 6394 հազ. աշխօր, որը կազմում էր կոլտնտեսականների վաստակած աշխօրերի 12,5%-ը [1, 64]:

Փաստորեն մի կողմից այդ տարածությունների վրա ներդրված նյութական ու աշխատանքային անհատույց ծախսերը, մյուս կողմից՝ ալպյան հարուստ արոտավայրերից զրկվելը ՀԽՍՀ գյուղատնտեսությանը կրկնակի վնաս հասցրեց:

Հայաստանի պայմաններում հացահատիկի արտադրության ավելացման հիմնական ուղին ոչ թե ցանքատարածությունների հախուռն ընդարձակումն էր, այլ ինտեսիվացման ճանապարհով բերքատվության բարձրացումը: Հանրապետությունը սեփական արտադրության հացով իր պահանջները երբեք չէր կարող բավարարել, ուստի այդ սխալ քաղաքականությունը հետագայում որոշ չափով շտկվեց:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում իշխանությունների ձեռնարկած միջոցառումների համակարգում առանձնահատուկ կարևորվում էր անասնապահության վերականգնումը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին, օբյեկտիվ մի շարք հանգամանքներով պայմանավորված,

անասունների գլխաքանակը կրճատվել էր: Տեխնիկայի սակավության պատճառով հանրային հոտում աճել էր բանող անասունների տեսակարար կշիռը: Այսպես, եթե 1941 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում էր 598,3 հազ. գլուխ, ապա 1945 թ.՝ 538 հազ. գլուխ, այդ թվում՝ կովերի գլխաքանակը՝ համապատասխանաբար 212,4 հազ. և 178,1 հազ. գլուխ [22, 75]:

Միաժամանակ նվազել էին անասնապահական մթերքների արտադրության ծավալները: Չնայած 1945 թ. յուրաքանչյուր կովի տարեկան միջին կաթնատվությունը 1940 թ. համեմատությամբ ավելացել էր 5 լիտրով՝ կազմելով 565 լիտր, այդուհանդերձ նույն ժամանակահատվածում կաթի համախառն արտադրանքը պակասել էր 39,6 հազ. տոննայով՝ կազմելով 130 հազ. տոննա [5]: Նույնն էր պատկերը նաև մսի և բրդի համախառն արտադրանքի գծով. եթե 1940 թ. մսի բոլոր տեսակների արտադրանքը (կենդանի քաշով) կազմում էր 39,9 հազ. տոննա, իսկ բրդինը (ֆիզիկական քաշով)՝ 1479 տոննա, ապա 1945 թ. համապատասխանաբար՝ 25,4 հազ. և 1300 տոննա [27, 12]:

ՀամԿ(Բ)Կ ԿԿ և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1949 թ. ապրիլի 18-ի որոշման համաձայն հաստատվեց հանրային մթերատու անասնապահության զարգացման 1949-1951 թթ. եռամյա պլանը: Նախատեսվեց կազմակերպել խոշոր և մանր եղջերավոր անասունների և թռչնաբուծական ֆերմաներ, բարելավել անասունների ցեղայնությունը, բարձրացնել մթերատվությունը, կարգավորել անասնաբուծա-անասնաբուծական սպասարկումը, վարկավորել կոլտնտեսությունների կողմից անասունների ձեռքբերման, աշխատատար գործընթացների մեքենայացման ու շինարարության աշխատանքները: ՀԽՍՀ-ում կոլտնտեսությունների վարկավորման ծավալի մեջ անասնապահության զարգացման նպատակներին ուղղվող մասը գերազանցեց գյուղատնտեսությանը հասկացված վարկերի 50 %-ը և կազմեց ավելի քան 45 մլն ռ. (գնի հին կուրսով) [21, 140-149]:

Մեր հանրապետությունում անասնապահության զարգացման եռամյա պլանի իրագործման նախապայմանը արոտավայրերի, խոտհարքների և կերային ցանքատարածությունների ընդարձակումն էր: Ուստի 1948 թ. համեմատությամբ 1951 թ. բազմամյա խոտաբույսերի ցանքատարածություններն ավելացան 50 %-ով, խոտացված կերի ցանքատարածությունները՝ 25 %-ով, խոտհունձը՝ 69 %-ով: Այդուհանդերձ, 1951 թ. հանրապետությունում անասնակերի կուտակման պլանը շուրջ 42 %-ով թերակատարվեց [10]: Հետևաբար, մուրային շրջանում ոչ բավարար

բուման հետևանքով շարունակում էին մեծ թիվ կազմել անասունների անկումները. միայն 1951 թ. ՀԽՍՀ կոլտնտեսություններում այն կազմեց 176,3 հազ. գլուխ անասուն [9]:

Թեև ձեռնարկված միջոցառումների շնորհիվ արձանագրվեցին որոշ տեղաշարժեր, այնուամենայնիվ հանրային մթերատու անասնապահության զարգացման եռամյա պլանը ձախողվեց. անասնազլխաքանակը 1949-1951 թթ. ավելացավ ընդամենը 30,6 %-ով, այդ թվում՝ խոշոր եղջերավոր անասուններինը՝ 1948 թ. 343 հազար գլխի դիմաց կազմեց 372,7 հազար գլուխ կամ աճեց 9,6 %-ով, մանր եղջերավոր անասուններինը՝ համապատասխանաբար 986 հազար գլխից 1135,7 հազար գլուխ կամ 18,7 %-ով, խոզերինը՝ 44,8 հազար գլխից 81,2 հազար գլխի կամ 86,3 %-ով: Այն ցածր էր նույնիսկ 1941 թ. ցուցանիշից [8]:

Եռամյա պլանով նախատեսված 14 % աճի փոխարեն 7.8 %-ով նվազեցին նաև անասնապահական մթերքների արտադրության ծավալները [22, 76]:

Պլանավորման այսպիսի կարգը կաշկանդում էր գյուղատնտեսությանը զբաղվողների նախաձեռնությունը, թուլացնում աշխատանքի արդյունքի նկատմամբ նրանց պատասխանատվությունը, տարեցտարի ավելի էր խախտվում ցանքաշրջանառությունը, նվազում բերքատվությունը, պարբերաբար թերակատարվում էին պետական պարտադիր մթերումների պարտավորությունները:

Այս ամենի հետևանքով ՀԽՍՀ գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման 5-ամյա պլանը ակնկալվող արդյունքները չտվեց: 1950 թ. հանրապետության ցանքատարածությունները 1945 թ. համեմատությամբ ընդարձակվեցին 2,2 %-ով՝ կազմելով 471,2 հազ. հա [27, 48], իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելացավ ընդամենը 16 %-ով, այն դեպքում, երբ արդյունաբերությանն ավելացել էր 246 %-ով [23, 39]:

ԽՍՀՄ XIX համագումարը (1952 թ. հոկտեմբեր) հաստատեց ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հինգերորդ 5-ամյա պլանը: Նյութատեխնիկական բազայի ամրապնդման շնորհիվ նախատեսվում էր երկրագործության համախառն արտադրանքն ավելացնել 40, անասնազլխաքանակը՝ 37 %-ով: Սակայն, ելնելով գյուղատնտեսության վիճակի ոչ ճիշտ գնահատումից, ոչ բոլոր պլանային առաջադրանքներն ամրապնդվեցին տնտեսական ու կազմակերպչական միջոցառումներով: Եվ բնականաբար, գյուղատնտեսության ասպարեզում նկատելի առաջընթաց ապահովել հնարավոր չէր [17, 248]:

Ժողովրդական տնտեսության ամենախոցելի օղակը շարունակում

էր մնալ գյուղատնտեսությունը: Որպէս անհետաձգելի միջոցառում, անհրաժեշտ էր բարեփոխումների իրագործում, որի առանցքում աշխատանքի նկատմամբ գյուղացիների շահագրգռվածության բարձրացումն էր լինելու: Սակայն, ԽՍՀՄ գյուղատնտեսության նախարարությունը և ՀամԿ(Բ)Կ ԿԿ գյուղատնտեսության բաժինը ճգնաժամի պատճառը տեսնում էին կոլտնտեսությունների փոքր ցանքատարածությունների մեջ, որը, ըստ նրանց, կասեցնում էր մեքենայացման տարածումն ու գիտության նվաճումների արմատավորումը: Ուստի որոշվեց խոշորացնել կոլտնտեսությունները:

Դեռևս նախապատերազմական տարիներին ՄՏԿ-ների ամրապնդմանը զուգընթաց մանր կոլտնտեսությունները աստիճանաբար խոշորացվում էին: Պատերազմն ընդհատեց այդ աշխատանքները: Կոլտնտեսությունների հետագա ամրապնդման և գյուղացիների կոլտնտեսականացման պայմանների բարելավման նպատակով ՀամԿ(Բ)Կ ԿԿ 1950 թ. մայիսի 30-ի «Մանր կոլտնտեսությունների միավորման ու խոշորացման և այդ գործում կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին» որոշմամբ կոլտնտեսությունների խոշորացումը համարվեց բացառապէս կամավորության հիմունքներով իրականացվող, երկարատև և լուրջ նախապատրաստություն պահանջող միջոցառում [21, 500-502]: Բայց, ինչպէս ԽՍՀՄ-ում, այնպէս էլ ՀՆՄՀ-ում անտեսվեց այս կարևոր պայմանը: Առանց լուրջ նախապատրաստության և հարկադրանքով, հաշվի չառնելով տեղական առանձնահատկությունները, կոլտնտեսությունների խոշորացման աշխատանքներն արհեստականորեն մեծ թափ ստացան. 1009 կոլտնտեսություններից 514-ը միավորվեցին 219 խոշոր կոլտնտեսությունների մեջ: Այդ աշխատանքները շարունակվեցին նաև հաջորդ տարիներին: Արդեն 1951 թ. գործում էին 668, իսկ 1952 թ.՝ 630 կոլտնտեսություններ [27, 22-26]: Իսկ կոլտնտեսություններից մի քանիսը վերածվեցին գյուղատնտեսության որևէ ճյուղի մեջ մասնագիտացված խորհրտնտեսությունների, կամ եթե 1950 թ. հանրապետությունում հաշվվում էր 27, ապա 1953 թ.՝ 40 խորհրտնտեսություն [27, 18]:

Կոլտնտեսությունների խոշորացմամբ գյուղատնտեսական արտադրության վերահսկողությունը կրկին վերապահվեց ՄՏԿ-ներին և նրանց կուսակցական կազմակերպություններին: Նրանք նորից սկսեցին բաշխել պլանային առաջադրանքները, կատարել մեքենայական աշխատանքներ և ստանալ բնավարձ:

Թե որքան էր «արդյունավետ» այդ միջոցառումը, երևաց մի քանի տարի անց, երբ բողոքների ու դժգոհությունների ճնշման տակ սկսվեց

կոլտնտեսությունների զանգվածային ապախոշորացումը: Արդեն 1955 թ. գործում էին 872 կոլտնտեսություններ [27, 26]:

Միաժամանակ, ՀամԿ(բ)Կ ԿԿ մայիսի 30-ի որոշմամբ տեղական կուսակցական կազմակերպություններին առաջարկվեց «կոլտնտեսականների միջոցներով և ուժերով կառուցել բարեկարգ կոլտնտեսային բնակավայրեր»: Մամուլում ագրոքաղաքների կառուցման առաջարկությամբ հանդես եկավ նաև Ն. Խրուշչովը (ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղար, Մոսկվայի մարզկոմի առաջին քարտուղար): Ըստ նրա, այն լինելու էր ժամանակակից քաղաք, ուր գյուղացին իր կենցաղով նմանվելու էր քաղաքացու:

Այս պարզունակ եղանակով փորձ էր արվում նվազեցնել քաղաքի և գյուղի միջև առկա սոցիալ-տնտեսական տարբերությունները: Սակայն, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ն մերժեց այդ չիլիմնավորված, ժամանակավրեպ առաջարկությունը: Բայցևայնպես, միութենական որոշ հանրապետություններում (Ուկրաինա, Ղազախստան, Ադրբեջան), այդ թվում և Հայաստանում, ագրոքաղաքների կառուցումը դիտվեց որպես կոլտնտեսությունների խոշորացման նախապայման [25, 121]: ՀԿ(բ)Կ ԿԿ ցուցումով ՀԽՍՀ կառավարությանն առընթեր ճարտարապետական վարչությունը մշակեց 23 շրջաններում ագրոքաղաքների կառուցման հատակագծեր: Կառավարության կողմից հաստատվելուց հետո, բացառապես կոլտնտեսությունների միջոցներով, ծավալվեցին նախագծային աշխատանքներ: Գյուղատնտեսական շրջանառությունից դուրս գրվեցին և ագրոքաղաքներին տրամադրվեցին լավագույն տարածքներ:

Այդ գործընթացը կարող էր զգալիորեն կասեցնել գյուղատնտեսության զարգացումը, եթե ժամանակին չկանխվեր: ՀԿ(բ)Կ ԿԿ 1951 թ. ապրիլի-2-ի որոշմամբ պահանջվեց դադարեցնել ագրոքաղաքների նախագծային աշխատանքներն ու շինարարությունը [19, 274]:

Եզրակացություն

Թեև պատերազմի հետևանքներն ընդհանուր առմամբ հաղթահարվեցին, վերականգնվեց գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը, բարձրացավ մեքենայացման աստիճանը, փոխվեցին կոլտնտեսային գյուղացու աշխատանքի պայմանները, բայց և այնպես ժամանակաշրջանն առանձնանում է գյուղացիության կյանքին պետության կողմից ներագդելու հակատնտեսական մեթոդների լայն կիրառմամբ: Գյուղատնտեսության դիրեկտիվ պլանավորումը, վարչարարական և պատժիչ մեթոդների լայն կիրառումը, գյուղացու իրավական դրության

սահմանափակումները և այլն առաջ բերեցին կոլտնտեսային-խորհտնտեսային կարգի անընդհատ խորացող ճգնաժամ, որի հիմքում անկատար տնտեսական հարաբերություններն էին գյուղում: Գյուղատնտեսական ձեռնարկությունների և պետության փոխհարաբերություններն այնպես էին կառուցվել, որ որպես արտադրական կոոպերացիայի եղանակ՝ կոլտնտեսությունը գործնականում կորցրել էր կոոպերատիվ (ինքնագործունեություն) բնույթը, իսկ կոլտնտեսականը վեր էր ածվել իրավագուրկ աշխատուժի:

Ընդհանուր առմամբ, 1947-1952 թթ. գյուղատնտեսության մասին ընդունվել են շուրջ 40 որոշումներ, բայց դրանք բոլորն էլ չէին փոխում երկրում տնտեսական հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Պահպանվում էր ծանր արդյունաբերության առաջնությունը՝ ի հաշիվ տնտեսության մյուս ճյուղերի, հատկապես՝ գյուղատնտեսության:

Այդուհանդերձ, չպետք է նսեմացնել հետպատերազմյան դժվարությունների հաղթահարման գործում գյուղատնտեսության նշանակալից ներդրումն ու գյուղի դրական տեղաշարժերը: Եթե հաշվի առնենք, որ պետության օգնությունն ու աշխատանքային ռեսուրսները խիստ սահմանափակ էին, ապա գյուղատնտեսության վերականգնումն ու դանդաղ զարգացումը գյուղական բնակչության նշանակալից ձեռքբերումն էր, որն իրագործվեց նրա հսկայական ջանքերի շնորհիվ:

Գրականություն

1. Գեղամյան Գ., Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946-1958 թթ.), Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն, 1968, 230 էջ:
2. ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թ. 5:
3. ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թ. 16:
4. ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թ. 14-15:
5. ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թ. 17-18:
6. ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 43, թ. 86:
7. ՀԱԱ, ֆ. 1, ց. 30, գ. 233, թ. 26:
8. ՀԱԱ, ֆ. 1, ց. 31, գ. 199, թ. 36:
9. ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 24, թ. 66:
10. ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 75, թ. 33:
11. ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 233, թ. 28-29:
12. ՀԱԱ, ֆ. 1, ց. 36, գ. 83, թ. 51:

13. ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 83, թ. 52:
14. Հայաստանի գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հարցերը (պատասխանատու խմբագիր՝ Այրումյան Ա.), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1966, 294 էջ:
15. ՀԿ(Բ)Կ ԿԿ 1954 թ. Մատյան պլենումի որոշումը, Երևան, «Հայպետհրատ», 1954, 16 էջ:
16. ՀՍՍՌ գյուղատնտեսության տեղաբաշխումը և մասնագիտացումը, (պատասխանատու խմբագիր՝ Շահբազյան Մ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1960, 242 էջ:
17. ՄՄԿԿ տեղեկագիրը (խմբագիր՝ Աղայան Ծ.), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1984, 346 էջ:
18. «Սովետական Հայաստան», 31 հուլիսի, 1946:
19. Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920-1960 թ.թ. (խմբագիրներ՝ Զոհրաբյան Ս., Մարուխյան Ա.), Երևան, ՀԱՍՌ ԳԱ հրատարակչություն, 1960, 534 էջ:
20. Օհանջանյան Բ., Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1953-1965 թթ.), Երևան, ՀԱՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, 288 էջ:
21. Директивы КПСС и Советского Правительства по хозяйственным вопросам. Т. 3 (1946-1952), Москва, издательство «Госполитиздат», 1958, 704 с.
22. Народное хозяйство Армянской ССР (статистический сборник), Ереван, «Госстатиздат», 1957, 180 с.
23. Народное хозяйство Армянской ССР к 60-летию Великого Октября (статистически сборник), Ереван, издательство «Айастан», 1977, 224 с.
24. Ратьковский И., Ходяков М., История Советской России, Санкт-Петербург, издательство «Лень», 1999, 384 с.
25. Судьбы российского крестьянства (Редактор Афанасьев Ю.), Москва, издательство РГГУ, 1996, 596 с.
26. Советская Армения за 40 лет (статистический сборник), Ереван, «Армгосиздат», 1960, 209 с.
27. Сельское хозяйство Армянской ССР (статистический сборник), (Редактор Мелкумян Г.), издательство «Айпетрат», Ереван, 1961, 482 с.

Директивное планирование сельского хозяйства в Советской Армении: 1946-1953 гг.

Кохликян Арамаис

Резюме

Ключевые слова: Госплан СССР, Совет Министров СССР, коллективное хозяйство, природно-климатические условия, севооборот, реформы, аграрный кризис

Восстановлению сельского хозяйства в Советской Армении в послевоенный период препятствовало в первую очередь централизованное директивное планирование. Спецификой сложной системы планирования было то, что Госплан Арм. ССР и Министерство сельского хозяйства, по указанию вышестоящих органов, без учета природно-климатических особенностей отдельных хозяйств и экономической целесообразности повсеместно применяли одинаковый шаблонный подход.

Централизованно планировались посевные площади каждого колхоза, посевные культуры, их урожайность, поголовье скота, продуктивность и т.д. В результате этого, посевные площади всех возможных сельскохозяйственных культур, животноводческие и птицеводческие фермы были распределены по многим сельскохозяйственным предприятиям.

Все это препятствовало эффективному использованию земли и техники. Более того, приводило к высокой себестоимости продукции и, следовательно, к низкой рентабельности производства.

Среди ошибок в планировании и распределении сельского хозяйства в Арм. ССР следует указать исполнение постановления Совета Министров СССР от 30 мая 1950 года об обеспечении республики собственным хлебом. При принятии данного постановления полностью были проигнорированы особенности природно-климатических условий Армении. Повсеместно не применялся правильный севооборот. В то же время стали вспахивать горные склоны с большой покатостью, значительная часть земель которых через несколько лет подвергалась деградации и приходила в полную непригодность для сельскохозяйственной деятельности. Республика никогда не могла удовлетворить свои потребности в обеспечении хлеба собственного производства, поэтому эта ошибочная политика впоследствии в определенной степени была скорректирована. В послевоенный период в системе мероприятий, предпринятых властями, особую значимость приобретает восстановление животноводства.

По постановлению ЦК ВКП (б) и Совета Министров СССР от 18

апреля 1949 года был утвержден трехлетний план по развитию общественного продуктивного животноводства на 1949-1951 гг. Предполагалось увеличить количество племенного скота, повысить продуктивность, упорядочить зооветеринарное обслуживание, кредитовать колхозы для приобретения скота, механизировать трудоемкие процессы и проводить строительные работы.

Хотя после предпринятых мер были зафиксированы определенные изменения, однако, тем не менее, трехлетний план развития общественного продуктивного животноводства был сорван. Вместо предусмотренных по трехлетнему плану 14 % роста на 7.8 % снизились объемы производства животноводческой продукции.

Вследствие этого, пятилетний план восстановления и развития сельского хозяйства Арм. ССР не принес ожидаемых результатов. Исходя из неправильной оценки сельскохозяйственного положения, не все плановые задания были закреплены в экономических и организационных мероприятиях.

В целом, за 1947-1952 гг. было принято около 40 постановлений о сельском хозяйстве, но ни одно из них не изменило характер и содержание экономических отношений в стране.

Тем не менее, не стоит умалять значительный вклад сельского хозяйства в преодолении послевоенных трудностей и те положительные сдвиги, которые происходили в деревне. Если принять во внимание тот факт, что государственная помощь и трудовые ресурсы были крайне ограниченными, то можно считать, что восстановление и медленное развитие сельского хозяйства стали серьезным достижением для сельского населения, которые требовали мобилизации огромных сил.

Directive Planning of Agriculture in Soviet Armenia in 1946-1953

Kokhlikyan Aramais

Summary

Key words: Gosplan of the USSR, Council of Ministers of the USSR, collective farming, natural and climatic conditions, crop rotation, reforms, agrarian crisis.

The restoration of agriculture in Soviet Armenia during the post-war period was hampered primarily by centralized directive planning. The specificity of the complex planning system was that Gosplan Arm. The specificity of the complex planning system was that the State Planning Committee of the Soviet Armenia and the Ministry of Agriculture, at the direction of higher authorities, without taking into account the natural and climatic features of private farms and economic feasibility, applied the same template approach everywhere.

The sown areas of each collective farms, crops, their yields, livestock numbers, productivity, etc. were planned centrally. As a result, the sown areas of all possible agricultural crops, livestock and poultry farms were distributed among many agricultural enterprises.

All this hindered the efficient use of land and equipment. Moreover, it led to high production costs and, consequently, to low profitability of production.

Among the mistakes in the planning and distribution of agriculture in Soviet Armenia, one should indicate the resolution implementation of the Council of Ministers in the USSR of May 30, 1950 on providing the republic with bread. When adopting this resolution, the peculiarities of the natural and climatic conditions of Armenia were completely ignored. Not everywhere was the correct crop rotation applied. At the same time, high mountain slopes began to be plowed, a significant part of the lands of which, after a few years, was subjected to degradation and became completely unsuitable for agricultural activities. The Republic was never able to satisfy its own needs for the provision of its own bread, so this erroneous policy was subsequently corrected to a certain extent. In the post-war period, the system of measures taken by the authorities, the restoration of animal husbandry is of particular importance.

By a decree of the Orgburo of the Communist Party of the Soviet Union and the Council of Ministers of the USSR, April 18, 1949, a three-year plan for the development of public productive animal husbandry for 1949-1951 was

approved. It was supposed to increase the number of breeding cattle, improve productivity, streamline veterinary services, lend to collective farms for the purchase of livestock, mechanize labor-intensive processes and carry out construction work.

Although certain changes were recorded after the changes, nevertheless, the three-year plan for the development of public productive animal husbandry was frustrated. Instead of the 14 % growth envisaged by the three-year plan, the volumes of livestock production decreased by 7.8%.

As a result, the five-year plan for the restoration and development of agriculture in Soviet Armenia did not bring the expected results. Proceeding from an incorrect assessment of the agricultural situation, not all plan targets were fixed in economic and organizational measures.

In general, about 40 resolutions on agriculture were adopted in 1947-1952, but none of them changed the nature and content of economic relations in the country.

Nevertheless, one should not belittle the significant contribution of agriculture in overcoming post-war difficulties and the positive changes that took place in the countryside. If we take into account the fact that state aid and labor resources were extremely limited, then we can assume that the restoration and slow development of agriculture was a serious achievement for the rural population, which required the mobilization of huge forces.

Ներկայացվել է 11.09.2022 թ.
Գրախոսվել է 17.10.2022 թ.
Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.